ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Կրթական օբյեկտների հիմնանորոգում («Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը** տեղի ունեցավ **04.09.2020**թ. ժամը **16:00-ին** Էլեկտրոնային գնումների **www.armeps.am** կայքի միջոցով:

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /բացող/

Խաչատուր Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

Բացակայում էր ՝ Հ. Տոնոյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

**1.1 ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:**

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված *ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/11* ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ | navasardshinararllc@gmail.com |
| 2 | «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ | mailto:stepanyan1977@list.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. ՅուրաքանչյուրՄասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ | | «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | |
| | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ն ներառյալ |
| 1 | **78960070** | 59225000 | 71070000 | 65010000 | 78012000 |

**6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

**6.1** Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2020թ սեպտեմբերի 10-ին ժամը 16:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 10.09.2020թ. ժամը 16:00-ին**

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /բացող/

Խաչատուր Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

Բացակայում էր՝ Հ. Տոնոյան

**7. Տվյալներ յուրաքանչյուրՄասնակիցներիներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**7.1** Արձանագրել, որ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» և «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ների կողմից հայտով ներկայացված երաշխիքի բնօրինակները հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ մինչև 07.09.2020թ ժամը 17:00-ն, չեն ներկայացվել նախարարություն, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի՝ հիմք է հանդիսանում հայտերը մերժելու համար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

8. Գնահատման արդյունքների մասին.

**8.1** Հիմք ընդունելով սույն արձանագրության 7.1 կետը՝ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» և «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ների հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ իրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:**

***8.2*** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» և «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ների տվյալները՝ ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

**8.3** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը իրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

--------------- Մասիս Աղայանց /նախագահ/

--------------- Հովսեփ Գրիգորյան

--------------- Հարություն Մարտիրոսյան

--------------- Խաչատուր Գևորգյան

--------------- Կ. Բաղալյան /քարտուղար/